

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«12» ՄԱՅԻՍԻ 2014 Թ. N 42-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՄԱՍԻՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանի միջնորդությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, դատապարտյալի հետ անթույլատրելի կապերի մեջ գտնվելու, այն է՝ դատապարտյալին փոխանցելու նպատակով մեկ այլ քրեակատարողական ծառայողի միջոցով 5 (հինգ) հատ բջջային հեռախոսներ, ինչպես նաև բջջային հեռախոսի 1 (մեկ) էլեկտրական լիցքավորիչ և արգելված այլ իրեր քրեակատարողական հիմնարկ անցկացնելու փորձ անելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի երրորդ կարգի մասնագետ Մասիս Զավենի Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2014 թվականի մայիսի 13-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ